

նակչաց շատերի տոհմավրական նկարագիրներով և բազ-  
մաթիւ հետաքրքրական այլ պատումներով ու յաւելուած-  
ներով, որոնք առնչութիւն ունին այդ ժողովրդի պատ-  
մութեան հետ:

Այդ մեծ գործի ինքնաձեռագիր օրինակը հանգու-  
ցեալ հեղինակը յանձնած է Կ. Պօլսի թերայի աւագերէց  
շնորհազարդ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանին,  
որը իւր կողմից բարեհաճել է թոյլատրել մեզ հրատա-  
րակութեան տալու:

Արդ՝ ՚ի նկատի ունենալով այդ ընդարձակ երկի կա-  
րեսորութիւնը ժամանակակից պատմութեան համար՝ մենք  
կարծում ենք, որ կոտսուին նոր նախիջևանցիների մէջ  
անձինք, որոնք կցանկան լոյս ընծայել նորան: Գիրքը  
«Առմայի» դիրքով 1200 երեսներից կլինի բաղկացած:

## ՄՏՔԻ ՀՈՒՍԱՆԿԱՐԸ

Իեօնտգենի գիւտին, ինչպէս իւրաքանչիւր մի նոր երե-  
ւոյթի կամ գիւտի, որ ընդայնում է մարդու մտաւոր հո-  
րիզոնը, անկարելի էր, որ չէտեւեին մի շարք այլ գիւտեր:  
Այդ գիւտերի շարքին է պատկանում և մտքի լուսանկա-  
րը: Եթէ այն ամենը, ինչ որ այդ մտահն հաղորդում են,  
իրականանան, ապա այդ կարելի է համարել ծթ դարու ա-  
մենամեծ գիւտը:

Ամերիկայի „Asteral Comera Club“-ի անդամները, ո-  
րոնք իրենց նպատակ են գրել մասնաւորապէս լուսանկար-  
չութեան օգնութեամբ նորանոր գիւտական երևոյթներ  
յայտնագործելլ, Իեօնտգենի գիւտը փորձելուց յետոյ, մի  
շարք փորձեր արին նոյն ճառագայթների օգնութեամբ Լոն-  
դոնի ուսուցչապետ 2Ենգլիս Ռոջերսի յայտնութիւնը ստու-  
գելու, այն է թէ՝ Իեօնտգենի ճառագայթներով կարելի է  
ոչ միայն մութ աեղերում պատկերի լուսանկար ստանալը,  
այլ և հնարաւոր է լուսանկարչական զգայուն թիթեղի  
վրայ ժողովել անտեսանելի ալիքներ և կամ եթերի  
այն շարժողութիւնները, որ ուղեկից պիտի լինին  
մարդկային մոտքին:

Խսկապէս ասած, նոր չէ այն գաղափարը, որ մարդ-  
ութեանը բ.

կային մտքին ուղեկից է լինում իրերի մի յայտնի շարժողութիւն։ Թրանսիացի ուսուցչապետ Շարլ Բիշէն, 11—12 տարի սրանից առաջ, հիպնոտացրած անձնաւորութիւնների վրայ «մտաւոր ներշնչում» անելու փորձերի ժամանակ, զարմանալի հետևանքների հասաւ հեռաւոր տարածութեան մէջ այդ փորձերը կրկնելիս, աշա պյտ հետազօտութիւնների հիման վրայ նա հետևեալ գաղափարն արտայայտեց։ — Անկասկած մարդու կազմուածքի մէջ իւրաքանչիւր գործողութեան, ուրեմն նեարդուղեղային գործողութեան էլ հետևում է յայտնի քիմիական հակազդեցութիւններ (քառակի) կամ գործողութիւններ։ Այդ հակազդեցութեան հետևանքը պիտի լինի արտադրում և կլանում յայտնի ոյժերի։ Սակայն իւրաքանչիւր այդ օրինակ արտադրութիւնն պիտի իւր շրջակայքում առաջարկի ալիքանման շարժողութիւնն ինչպէս մոմի այլումից առաջացած քիմիական գործողութիւնը տարածում է ճառագոյթների ձևով, որ իբրև լոյս մենք տեսնում ենք, նոյնպէս միանգամայն հաւանական է, որ նեարդուղեղային գործողութիւնն էլ պիտի առաջացնի նոյնանման ալիքներ կամ ճառագոյթներ, տարբեր լուսոյ ճառագոյթներից նրանով, որ մեր աչքին անտեսանելի են։ Այդ տեսակ անտեսանելի ճառագոյթների գոյութիւնը վաղուց յայտնի է գիտութեան մէջ զերմութեան, քիմիական և այլն ճառագոյթներ անուններով։

Այսպէս ուրեմն 11—12 տարուց առաջ Բիշէի արտայայտած ենթագրութիւնը միանգամայն իրականացաւ նեստգենի գիտով, իսկ ուսուցչապետ Ռոջերսը միայն կրկնեց որոշ կերպով յայտնելով, որ այդօրինակ ճառագոյթներ կամ ալիքներ ոչ միայն գոյութիւն պիտի ունենան այլ և պիտի ներգործին լուսանկարչական թիթեղի վրայ։ Ահա միայն այս վերջին գաղափարն է պատկանում Ռոջերսին։

Դիմենք այժմ արած փորձերի նկարագրութեան, թողնելով ընթերցողներին վերն առաջ բերած բացարութիւնների հիման վրայ հանել գիտնական եղանակացութիւնները։

Ուսուցչապետ Ռոջերսը մաքր լուսանկարելու, կամ առաւել ձիշտն ասած, մտաւոր պատկերների լուսանկարելու փորձերը ինքն էր անում։ Դրա համար նա վարւում էր հետևեալ կերպով։ վերցնելով փոստային դրօշանիշը նայում

Էր նրա վրայ շարունակ մի քանի ըսպէ, ապա մտնելով մութ  
սենեակը այնտեղ լուսանկարչական մժասենեակի ոսպինեակի  
միջից շարունակում էր նայել զգայուն թիթեղի վրայ: Այդ  
դէպքում դրօշանիշի պատկերը պահպանում էր մտքում  
կամ երևակայութեան մէջ և ապա, ինչպէս ինքն ասում է,  
զգայուն եթերի միջակ անցնում է թիթեղի վրայ, որ յար-  
մարացրած է այդ ապաւորութիւնն ընդունելու համար: Այդ  
փորձի հետևանքը տիւ է եղել, ինչպէս հաւատացնում է  
բոջերսը, որ նա ստացել է դրօշանիշի պատկերը թէև շատ  
փոքրիկ, բայց թագուհու պատկերի պարզ գծերով և  
„one penny“ բառերով:

Այդ առաջին փորձն էր, սակայն անհերքելի չէր, ո-  
րովհետև կարելի էր ենթադրել, որ աչքի ցանցաթաղան-  
թի վրայ ապաւորուել էր դրօշանիշի և կամ առհասարակ  
այն առարկայի պատկերը, որին նա երկար ժամանակ նայել  
էր և որն յետոյ անցել է լուսանկարչական զգայուն թի-  
թեղի վրայ, երբ նա նայել է նրա վրայ: Բոջերսի այդ փոր-  
ձից կարելի էր եղանակացնել, որ ցանցաթաղանթի մակերևոյ-  
թի և լուսանկարչական զգայուն թերթիկի մէջ մի քանի  
նմանութիւններ կան, որով նա, — ցանցաթաղանթը, կարող  
է մի քանի վայրկեան պահպանել իւր վրայ ընկած լուսոյ  
ճառագագայթները: Անհրաժեշտ էին ուրիշ փորձեր, և այդ  
արաւ մի ուրիշ անգղիացի կամերոն Լի՛ (Lee):

Լուսանկարչական խաւարասենեակի ոսպինեակի մէջ  
նայելով, նա սկսեց լարուած ուշադրութեամբ մտածել իւր՝  
յաճախ տեսած մի կատուի վրայ, որի պատկերը նա բաւա-  
կան պարզ կերպով կարող էր վերարտադրել երևակա-  
յութեան մէջ: Երկար ժամանակ այդպէս նայելուց յետոյ,  
նա ապակու վրայ ստացաւ մի պարզ շրջանակ; երևի մեծա-  
ցած բրի պատկերը, և նրա կենդրուում մի բնբոյշ նկար, որ իւ-  
րաքանչիւր ոք առանց սխալուելու կ'անուանի կատուի պատկեր:

Լսելով Կամբոն Վի փորձերի մասին Ալկալիդի պատ-  
ուաւոր ժողովարանը վճռեց այդ փորձերը կրկնել առաւել  
ընդարձակ ծաւալով: Նրա պատուաւոր նախագահներից մէկը  
— նզա Մարզինը, փորձի հետևեալ կերպը առաջարկեց: նա  
լուսանկարչական մթասենեակի խողովակում աեղաւորեց եօ-  
թը թրաշ ունեցող մի ապակի այնպէս, որ թրաշներից իւ-

բարեանշիւրի առաջ կարողանան աեղաւորուել և նայել մի մի հոգի, ուրիշ խօսքով՝ միանգամբ եօթը աչք կարողանայ նայել ապակու եօթը թրաշի վրայ. թէ ինչո՞ւ եօթը և ոչ աւելի կամ պակաս, ոյդ պարզուած չէ: Ապակու եօթը թրաշների վրայ տչքից եկող ճառագայթները կենդրոնանում են մի ընդհանուր հնոցի մէջ և ապա մացեալ պատկերը ընկնում և լուսանկարչական զգայուն թիթեղի վրայ: — Սակայն այդ չէ բոլորը, իւրաքանչիւր տչքից գեպի իւրաքանչիւր թրաշ անցնում է մի մի առանցնացած խողովակ, որի մէջ կայ ելեբարականութիւն անցկացնող թել: Այդ ճանապարհով, գործիքը հնարողի կարծիքով, ելեբարական հոստնբը, որ նայողներից իւրաքանչիւրի ուղեղից հաղորդում է աչքին, այստեղից թելերի միջոցով պիտի հասնի ապակու թրաշներին:

Այսուհետև ժողովարանի անդամների միջից ընտրեցին եօթը հոգի, որոնք առաւել ընդունակ էին զգումիրենց ուշադրութիւնը կենդրոնացնելու որ և է առարկայի վրայ: Երբ իւրաքանչիւրը իւր համապատասխան տեղը բռնեց, այն ժամանակ նոցա բոլորին թողին ամենախիստ մթութեան մէջ և նրանցից ամեն մէկը իւր միտքը լարեց կատուի պատկերի վրայ: Ստացած լուսանկարը տպագրուեցաւ հանգէններում: Մի կատուի պատկերի փոխանակ, ինչպէս սպասում էր ստանալ Աղա-Մարտինը, ստացուեցաւ միմեանցից առաւել կամ պակաս մեծութեամբ եօթը հատ կատուների պարզ նկարներ: — Աւելորդ չի լինի յիշել, որ յիշեալ փորձը աևեց 10 ըոպէ, մի ժամանակամիջոց, որ անհրաժեշտ է հոգեկան ոյժի թիթեղի վրայ ներգործելու համար: Սակայն աւելի ճիշտ կլինէր, եթէ մենք այդ ոյժը անուանելու լինինք նեարդային, որովհետև ոչ ոք չի ուրանում նեարդային հոսանքի գոյութիւնը: Այդ իսկ պատճառով հարցի վրայ սկզբունքի տեսակէտից նայելով — անհնար չի կարելի համարել այդ հոսանքի լուսանկարելը:

Այս նորագոյն գիւտը այն ժամանակ միայն գիտնական նշանակութիւն կստանայ, երբ հեղինակաւոր գիտնականներ կստուգեն իրենց արհեստանոցներում: Եթէ վերջիններս ստուգեն և հաւաստիացնեն այդ փորձերի ճշմարտութիւնը, ապա գիտութեան առաջ կրացուի հոգեբանական պյլ գիւտերի մի անսուհման ասպարէզ, հակառակ գեպ-

քում նա կփարատի զաՏ - գիտնական խաբերայութիւնը և նրանով գրաւուած նախապաշարումը:

Թէ մինչեւ որ աստիճան արդէն Ամերիկայում և Անգլիայում տարածուած պիտի լինի այդ նորագոյն գիւտը, պիտի դատել նրանով, որ գիտնական հանդէսները և օրաթերթերը տարածեցին նրա համար իրենց հարիւր հազարաւոր ընթերցողների շրջանում:

Ա. Ե.

## ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏԻ ԿԱՆԱՑ ԶԱՐԴԵՐԸ

Հայ կանանց

1. Փաքով վրան ոսկի և մարգրիտ շարուած է և գլուխնին կդնեն:

2. Գորշայ վրան ոսկի թուբեր և մարգրիտ շարուած է և գլուխնին կդնեն:

3. Գամշի վրան մարգրիտ և էլմասանդէններ շարուած է: Ճակատնին կկապեն:

4. Շակունուց վրան մարգրիտ ուրուբեայ շարուած: Երեսնուն կկապեն:

5. Շըռամֆէ մարգրտով թոռ բանուած է և վարի կողմէ ալ հինկնոց շարուած է. գամչու վարի կողմը կկախեն:

6. Օղերներ տեսակ տեսակը կայ, էլմասանդ, մարդրուզի, զմրութով և ոսկեղէն, ականջը կդնեն:

7. Գլխու չիթ վրան թուբեր շարուած է. գլխնու ետևը կձգեն:

8. Պողազի հապեր:

9. Երկար վզի հապեր և չակրտակ:

10. Աշգաղանտի, վզերնին կձգեն երեք տակէն և մէկ տակէն:

11. Պողմածայ, շարիթի վրան տեսակ մ' ոսկի շարուած է:

12. Ձկնիր. այն ալ տեսակ մը ոսկի է սուլուկի պէս երկար և սրաերնու վրայ կձգեն:

13. Թըլլըսըլմ. ինքը զանձիրէ և վրան ուռուբեայ շարուած է:

14. Շարան. վրան տեսակ տեսակ ոսկիներ կշարեն:

15. ՄՓթով. մարգրտով և հապերով շարուած:

16. Պողազի մարգրիտ. վրան էլմասա խաչ: